ՌՈՒԶԱՆՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
(ՃՇՀԱՀ)

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1998-2018) ՀՀ-ՈՒՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նորագույն շրջանի եկեղեցիների ճարտարապետական լուծումները խնդիր ունեն համաքայլ ընթանալ ժամանակակից ճարտարապետական միտումների հետ՝ միաժամանակ պահպանելով հին միջնադարյան կրոնական ճարտարապետության ավանդույթները: Վերջինս բարդագույն խնդիր է, որի լուծումը ոչ միշտ է գտնվում: Ոճերի միաձուլման և համադրման բարդությունները ի հայտ են գալիս հատկապես արդիական ոճերի և միջնադարյան զարդաքանդակների համադրման ժամանակ:

Քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700 ամյակի առիթով հայտարարվեց մրցույթ՝ Երևանում մայր տաճար կառուցելու նպատակով, որի արդյունքում հաղթող դարձավ Ստեփան Քյուրքչյանի նախագիծը (տե՛ս նկ.3)[1]:

Գլխավոր ճարատարապետ՝ Ս. Քյուրքչյան

Շինարար՝ Վ. Պողոսյան

Գլխ. Կոնստրուկտոր՝ Դ. Դալլաքյան

Շին. ղեկավար, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ՝ Էդուարդ Պալասանյան:

Հատված n 7 արձանագրությունից.

«1992թ. հոկտեմբերի 8-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին Վեհափառ Հայրապետի հրավերով և իր մասնակցությամբ կայացավ Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարի մրցութային հանձնաժողովի նիստը՝ մասնակցությամբ Ներսես Գարեգին եպիսկոպոս

[1] Քյուրքչյան Ս., Երևանի Ս. Գրիգոր լուսավորիչ եկեղեցին, Էջմիածին, 2001, էջ 114-119:

Ներսիսյանի, դոկտոր-պրոֆեսոր Վ. Հարությունյանի, ժող. Նկարիչ Գ. Խանջյանի, ՀՀ ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ռ. Ջուլհակյանի, ժող. ճարտարապետ Ջիմ Թորոսյանի, Երևան քաղաքի գլխ. ճարտարապետ Մ. Մինասյանի և վաստակավոր ճարտարապետ Բ. Արզումանյանի»[2]:

Հետաքրքրական է, որ արդեն վերամշակված տարբերակում ևս մեկ անգամ դիտողություն կատարվեց այն առումով, որ հատակագծում խաչաձևություն խորհրդանշող ուղղաձիգ կերպով շեշտված պատերը չեն համապատասխանում հայկական ճարտարապետությանը և պետք է չլինեն վերջնական նախագծում: Բացի այս նախագծից, մրցույթին մասնակցում էին ևս 33 նախագծեր, սակայն ի վերջո հաղթում է Ս. Քյուրքչյանի նախագիծը, ինչպես նշվեց, վերջնական վերամշակումից հետո: Եկեղեցու դիրքը հաջողությամբ է ընտրված: Առհասարակ կրոնական կառուցներին բնորոշ են բարձրադիր վայրում գտնվելը: Գլխավոր ճակատի կողմից, արևմտյան մուտքի հատվածում է գտվում ամպհովանին: Ներքին հատվածում հետաքրքիր է աղեղաձև փոխհատվող կամարներով ձևավորված առաստաղը: Այսպիսի լուծումներ կարելի է տեսնել Հաղպատ[3] եկեղեցական համալիրի գավիթ-ժամատան ներսում: Այն դինամիկա է հաղորդում ընդհանուր ինտերիերին: Եկեղեցու հորինվածքային կենտրոնը խորանն է և դրա դիմաց գտնվող աղոթարանը: Մոմավառության հատվածը գտնվում է առանձին տարածքում: Եկեղեցին օծվեց սեպտեմբերի 23-ին[4]: 2019թ. ապրիլի 21-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին երկրորդը Սուրբ Ջատկի պատարագը մատուցեց Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

---

[2] Հարությունյան Վ., Խորան Լուսո և հավատքի, Էջմիածին, 1992, դ, էջ 1-3:

[3] Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 298:

[4] Միքայելյան Սրկ. Դավիթ, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծման սրբազան արարողությունը, Էջմիածին, 2001, էջ 44:

Յուրօրինակ ճարտարապետական նմուշ է Սբ. Երրորդություն եկեղեցին, որի ճարտարապետն է Բ. Արզումանյանը (տե՛ս նկ. 4): Այն իրենից ներկայացնում է բոլորակ (ռոտոնդա) հիմքով, եռանավ, եռանիստ զվարթնոցատիպ կառույց: Մեջտեղի նիստի տանիքը հովհարաձև է: Զանգակատան գլխավոր ճակատին քանդակված է «Է» տառը, որը խորհրդանշում է «էություն» բառը: Գլխավոր մուտքի հատվածում գտնվում է զանգակատունը: Հաջող կերպով է լուծված Սբ. Երրորդություն եկեղեցու այգու հատվածը, ինչպես նաև այգու հորինվածքը լիակատար կերպով ներդաշնակում է եկեղեցու ճարտարապետական ձևերի հետ: Քանի որ այգին ծառայում է որպես եկեղեցական շինության լրացնող մաս, ապա այն պետք է շեշտադրի հենց բուն եկեղեցին, այլ ոչ թե իր վրա վերցնի առաջնայինի դերը: Տվյալ դեպքում այս խնդիրը հաջողությամբ է լուծված: Այգու կենտրոնական մասը, այսինքն, եկեղեցու հատվածը ազատ է մարդկային հոսքերի տեղաշարժման համար, իսկ կողային հատվածները կանաչապատ են :

Սուրբ Աննա եկեղեցին կառուցվել է բարերար Հրայր և Աննա Հովհաննիսյանների միջոցներով, ճարտարապետն է՝ Վահագն Մովսիսյանը (տե՛ս նկ.8): Եկեղեցին գտնվում է Երևան քաղաքի Աբովյան փողոցի վրա: Այն իրենից ներկայացնում է խաչաթև հիմքով միագմբեթ կառույց: Եկեղեցու ողջ ճակատով, բացառությամբ զանգակատան հատվածի, ընթանում է զարթաքանդակային ժապավեն: Դրանից ներքև տեղադրված են սրբերի բարձրաքանդակներ: Եկեղեցին կառուցվել է Սբ. Կաթողիկե ժամատան հարևանությամբ: Սուրբ Աննայի օծումը կատարվել է Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի օրերին: Եկեղեցու բուն հատվածը չունի մոմավառության սրա. այն կից գտնվող փոքրիկ մատուռում է, իսկ Կաթողիկե մատուռը կառուցվել է 13-րդ դարում[5]:

---

[5] Ղադաֆարյան Կ., Միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975, էջ 23-24:

Արաբկիրի եկեղեցու հիմնօրհներքը տեղի է ունեցել 2013 թ. (ճարտարապետ՝ Ա. Ղուլյան), իսկ երեք տարի անց օծվեցին եկեղեցու հինգ զանգերը, որոնք ունեն իրենց նշանակությունը և խորհուրդը: Եկեղեցին կենտրոնագմբեթ է, ունի բազմանիստ թմբուկ, որը պսակված է նեղ պատուհաններով: Մուտքի հատվածը իրենից ներկայացնում է երկթեք տանիքով ելուստ: Գլխավոր ճակատը զարդարված է եռագոտի պորտալով, որը չի հասնում բուն մուտքին: Ներքին հատվածի հորինվածքի կենտրոնում է գտնվում խորանը, իսկ հարավային և հյուսիսային մասերում՝ մոմավառության հատվածը: Հյուսիսային կողմում է գտնվում նաև երկրորդ մուտքը, որի երկու կողմերում առկա են երկու սրբապատկերներ, ևս երկուսը գտնվում են հարավային հատվածում: Հետաքրքիր լուծում է տրված առագաստների. դրանք իրեցնից ներկայացնում են անկյունից դեպի առագաստի հիմքը գնացող եռանկյուն հիմքով հորինվածք, որոնք մոտենալով գմբեթային մասին, ստանում են կոր ձև: Արտաքին պատերը շարված են տուֆից, իսկ հիմքային հատվածը՝ բազալտից: Զանգակատունը անջատ է բուն եկեղեցու շենքից:

Հետաքրքրական է Նորաբաց գյուղում կառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցին (տե՛ս նկ. 5): Այն կառուցված է հայկական վաղմիջնադարյան շրջանին բնորոշ բազիլիկների ձևով, ընդ որում, շինությունը չունի գմբեթ: Արևմտյան հատվածում է գտնվում զանգակատունը: Եկեղեցու մուտքերը նմանեցված են Երերույքի տաճարի շքամուտքին[6]: Եկեղեցին կառուցված է տուֆով, իսկ հիմքային հատվածում օգտագործվել է բազալտ: Եկեղեցու պատուհանները զարդարված են սրբերի պատկերներով, գունապակիներով:

Ճարտարապետական առումով նորություն է Սրբոց Վարդանանց եկեղեցին (տե՛ս նկ. 7): Այն հայկական ավանդական եկեղեցական ճարտարապետական ավանդույթների ոճին այնքան էլ չի համապատասխանում: Նրանում հայկական ճարտարապետական տարրերը

---

[6] Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 89:

միաձուլված են կուբիստական էլեմենտների հետ: Այս կառույցում ճարտարապետը հրաժարվել է ավանդական թմբուկի ձևից՝ այն դարձնելով միատարր: Ըստ էության, գմբեթը և թմբուկը գրեթե միասնական են և դժվար է դրանք տարանջատել: Հետաքրքրական է խորշերի լուծումը, որոնք ունեն խաչի տեսք:

Նոր խոսք է նաև Ջիմ Թորոսյանի հեղինակած Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին (տե՛ս նկ. 2): Այն իրենից ներկայացնում է կենտրոնագմբեթ բոլորակ հիմքով եկեղեցի-դամբարան: Թմբուկային հատվածը բաղկացած է խաչաձև պատուհաններից, իսկ ողջ ճակատը ձևավորված է կորաձև որմնախորշերով: Նիստերի ծածկը հովհարաձև է: Հետաքրքրական է եկեղեցու խորան. այն սովորականից նեղ է և կարծես ներկայացնում է աբսիդի և խորշի միաձուլում: Խորշերը զարդարում են ոչ միայն արտաքին, այլ նաև՝ ներքին հատվածը:

Արթուր Թարխանյանի և նրա դստեր՝ Անահիտ Թարխանյանի հեղինակած Սուրբ Թադևոս եկեղեցին ժամանակակից եկեղեցական ճարտարապետության լավագույն օրինակներից մեկն է (տե՛ս նկ. 1): Արթուր Թարխանյանը խորհրդային մոդեռնիստական և պոստմոդեռնիստական ճարտարապետության կերտողներից մեկն էր: Թարխանյանի ինքնատիպ մոտեցումը երևում է նաև այս կառույցի մեջ: Եկեղեցին ամբողջովին կազմված է երկրաչափական հստակ ձևերից: Հարկ է նշել, որ ավանդական հայկական եկեղեցական ճարտարապետության մեջ քիչ են հանդիպում նման խիստ երկրաչափական ձևով լուծված, առանց կոր ձևերի օրինակնե. դրանցից են, օրինակ, Շողագավանքի և Ալուչալու վանքի եկեղեցիները[7]: Սուրբ Թադևոս եկեղեցին եռանիստ է: Հեղինակները հրաժարվել են թմբուկի ավանդական պատուհանների ձևերից: Թմբուկի լուսավորությունը ապահովում են վերջինիս կողմերի կենտրոնում գտնվող փոքր կորաձև երդիկները, որոնք ներդաշնակեցված են հովհարաձև տանիքին: Ինչպես Սուրբ Աննա եկեղեցու երկրոդ նիստը, այնպես էլ այս եկեղեցու

[7]Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 214:

երկրորդ նիստը ունի հովհարաձև տանիք: Առաջին նիստը բաղկացած է երկթեք ուղղանկյուն մասերից՝ կենտրոնում՝ ուղղանկյուն և նեղ պատուհաններով: Դրանց հատման կետերում հետաքրքրական են խորշերը, որոնք, ըստ էության, իրենցից ներկայացնում են լույսի նեղլիկ աղբյուրներ՝ արտաքին կողմից զարդարված ուղղանկյունաձև զարդաժապավեններով: Գլխավոր ճակատը բաղկացած է խաչաձև (խաչի ձև ունեցող մասը ձուլվում է ուղղանկյուն հատվածի հետ, որտեղ գտնվում է եկեղեցու գլխավոր մուտքը) եռաշերտ պորտալից: Գլխավոր ճակատի երկու մասերում սիմետրիկ կերպով վեր են խոյանում զանգակատները: Մոմավառության հատվածը անջատ է բուն եկեղեցուց: Այն վեցանիստ փոքր կառույց է, զարդարված արտաքին և ներքին հատվածներում դարբնակուռ զարդարարական էլեմենտներով և գունապակիներով: Ընդհանուր մոնումենտալության պայմաններում այս կառույցը առանձնապես աչքի չի ընկնում, սակայն յուրահատուկ է իր լուծումներով:

2014 թ. Նորքի երկրորդ զանգվածում բացվեց Ս. Աստվածածին եկեղեցին և դրան կից Ֆրիտյոֆ Նանսենի անվան թանգարանը (ճարտարապետներ՝ Ալբերտ Սոխիկյան, Արտաշես Սոխիկյան) (տես նկ. 6): Եկեղեցին երեսապատված է ոչ թե ավանդական տուֆով, այլ սպիտակ տրավերտինով, ինչը յուրահատուկություն է հաղորդում եկեղեցուն, քանի որ սովորաբար նմանատիպ գունային լուծում օգտագործվում է միջերկրյածովյան երկրների ճարտարապետության մեջ: Հետաքրքրական է նաև պատշարային եղանակը. ճակատներից երկուսի շարվածքը արված է կորաձև, որը կենտրոնում վերածվում է կետի: Հենց այդ ճակատներից մեկում էլ գտնվում է արևային ժամացույցը: Մոմավառության հատվածը գտնվում է դրսում՝ մեկ կողմից փակված ապակիով: Եկեղեցու ներսը կատարված է մինիմալիստական ոճով: Հետաքրքրական է, որ եկեղեցու արտաքին ճարտարապետությունը թողնում է մոնումենտալ կառույցի տպավորություն, սակայն ինտերիերը՝ իր չափերով շատ համեստ է: Եկեղեցուն պատկերային առումով ծավալով է օժտում նաև քարի գույնը:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ ընդհանուր առմամբ այս բոլոր օրինակներում զգացվում է անհատական կատարողական մոտեցում: Դրան նպաստում է նաև այն փաստը, որ նմանատիպ կառույցները գրեթե միշտ վստահվում են մեծ ստեղծագործական ճանապարհ անցած ճարտարապետների: Դրանք երբեմն ունեն համարձակ, երբեմն՝ ավանդական մոտեցումներ, սակայն ակնհայտորեն այս օրինակներից յուրաքանչյուրը արտացոլում է միջնադարյան ճարտարապետության և նորարարական ոճային լուծումների միաձուլման օրինակներ: Այն ի ցույց է դնում, թե որքանով են մեր ճարտարապետները վարպետացած իրենց գործի մեջ, քանզի եկեղեցիների կառուցումը կարևորագույն ուղղություն է հայկական ճարտարապետության համար, նամանավանդ, առաջինը պաշտոնապես քրիստոնեություն ընդունած ժողովրդի համար: Մեր եկեղեցական ճարտարապետությունը միշտ աչքի է ընկել զսպվածությամբ և ձևերի հստակությամբ: Դա հրաշալի հնարավորություն է տալիս շատ ավելի համարձակորեն խաղալ ճարտարապետական ձևերի հետ՝ միաժամանակ չկորցնելով ավանդական տարրերը: Դրա հետ մեկտեղ ժամանակակից համաշխարհային եկեղեցաշինության մեջ այլևս չկան ձևաստեղծման կանոններ և սահմաններ: Այդպիսի փայլուն օրինակներ են Ալվար Ալտոյի[8], Թադաո Անդոյի[9], Լե Կորբյուզեյի, Ֆրից Վորտուբայի տարբեր տարիների հեղինակած եկեղեցիները: Հայկական ճարտարապետության ավանդական ձևերի հետևողական պահպանումը կապված է հայ էթնոհոգեբանական առանձնահատկությունների հետ:

---

[8] Гозак А., Алвар Аатло архитектура и гуманизм, Москва, 1978, с. 215. Տե՛ս նաև, Lathi L., Aalto (Basic Art Series 2.0), Taschen, 2004, p. 15.

[9] Jodidio P., Ando (complete works 1975-today), Taschen, 2014, p.127.

Եկեղեցիների ցանկը ըստ ժամանակագրության (1998-2018)

Եկեղեցու անվանումը		Ճարտարապետի (ների) անունը	Կառուցման տարեթիվը	Վայրը
1	Սրբոց Վարդանանց Նահատակաց եկեղեցի	Ասլան Մխիթարյան	1998թ.	Երևան
2	Սուրբ Մարիամ եկեղեցի	Հրաչյա Գասպարյան	1998թ.	Երևան
3	Նոր Նորք 5-րդ զանգվածում գտնվող Սուրբ Սարգիս եկեղեցի	Բաղդասար Արզումանյան	2000թ.	Երևան
4	Սուրբ Հարություն եկեղեցի	Բաղդասար Արզումանյան	2000թ.	Արարատի մարզ, Ներքին Դվին գյուղ
5	Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի	Ստեփան Քյուրքչյան	2001թ.	Երևան
6	Սուրբ Գևորգ եկեղեցի	Հրաչյա Գասպարայն	2002թ.	Գյուղ Մարմարաշեն
7	Սուրբ երրորդություն եկեղեցի	Բաղդասար Արզումանյան	2005թ.	Երևան
8	Սուրբ Աստվածածին եկեղեցի	Դավիթ Քերթմենջյան	2005թ.	Գյուղ Արևշատ
9	Սուրբ Խաչ եկեղեցի	Հրաչյա Գասպարյան	2006թ.	Երևան
10	Սուրբ Գևորգ եկեղեցի	Հրաչյա Գասպարյան	2009թ.	Մասիս
11	Էջմիածնի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցի	Ջիմ Թորոսյան	2011թ.	Էջմիածին
12	Սուրբ Աստվածածին եկեղեցի	Ալբերտ Սոխիկյան, Արտաշես Սոխիկյան	2014թ.	Երևան
13	Սուրբ Աստվածածին եկեղեցի	Հրաչյա Գասպարյան	2014թ.	Գյուղ Նորաբաց
14	Սուրբ Աննա եկեղեցի	Վահագն Մովսիսյան	2015թ.	Երևան
15	Սուրբ Հովհաննես Եկեղեցի	Արտակ Ղուլյան, Էմմա Ֆահրադյան, Մարտին Սեդրակյան	2015թ	Արտաշատ

16	Սուրբ Թադևոս եկեղեցի	Արթուր Թարխանյան (հետմահու էքիզային նախագծի համաձայն), Անահիտ Թարխանյան	2015թ.	Մասիս
17	Սուրբ Մ. Աստվածածին մատուռ	Սուրեն Աբովյան	2015թ.	Վահագնաձոր գյուղ, Լոռու մարզ
18	Սրբոց Նահատակաց Եկեղեցի	Արտակ Ղուլյան	2015թ.	Երևան, Նորքարաշեն համայնք
19	Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի	Արտակ Ղուլյան	2015թ.	Նոր Հաճն
20	ԱՀԹ Արաբկիրի եկեղեցի	Արտակ Ղուլյան	2018թ.	Երևան

RUZANNA MIKAYELYAN
(NUACA)

ARCHITECTURAL FEATURES OF CHURCHES CONSTRUCTED IN REPUBLIC OF ARMENIA IN THE MODERN PERIOD (1998-2018)

This article presents churches built in different years of the modern era (chronologically presented in the table), their interpretation, environmental peculiarities, and more. The author focuses on eight churches, which most vividly reflect the modern church and architectural trends of the newest era of the Armenian history. In addition, some of these churches are considered important and major religious institutions of the capital of Armenia. The objective set for the architectural solutions in construction of churches of the newest period is to retain traditions of the Armenian medieval ecclesiastical architecture and moving with modern architecture tendencies at the same time. The latter is a very complicated issue and relevant solution cannot be always found. The difficulties of fusion and combination of styles especially appear when combining modern and medieval ornament.

Նկ. 1. Սբ. Թադևոս եկեղեցի

Նկ. 2. Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցի

Նկ. 3. Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

Նկ. 4. Սբ. Երրորդություն եկեղեցի

Նկ. 5. Նորաբաց գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցի

Նկ. 6. Սբ. Աստվածածին եկեղեցի

Նկ. 7. Սբ. Նահատակաց եկեղեցի



Նկ. 8. Սբ. Աննա եկեղեցի